ցնէին իրենց յետ մնացած և մահաբեր քնով ննջող քոյրերին։ Դէհ, հայրենասէր տիկիններ և ընկերասէր Հայ օրիորդներ, եթէ կամենում էք ձեր կեանքում մի բարի և օգտակար գործ կատարել, ամառնային ամիսներին շրջեցէք Ուտիացոց երկրում, որոնք ձեզ սիրով և գրկաբաց կընդունեն։ Դուք նրանց թէ շատ բան կսովորեցնէք և թէ նրանց նիստ ու կացը ուսումնասիրելով ու հետազօտելով՝ ինքներդ ևս շատ բան կսովորէք։

Թ

ՈՒՏԻԱՑՈՑ ԵՐԿՐԻ ՑԱՅՏՆԻ ՎԱՆՔԵՐՆ ՈՒ ՍԲՐԲԱՎԱՅՐԵՐԸ

Ա. ԵՂԻՇԷ ԱՌԱՔԵԱԼԻ ՎԱՆՔԸ *)։ Այս վանքը շինուած է Նուխու հիւսիսային կողմը, Կովկասեան լեռնաշղթայի մի սարաւանդակի վրայ, ս. Եղիշէ առաքեալի ձեռքով։ Ս. Եղիշէ առաքեալը Յիսուսի 72 աշակերտներից մինն էր. նա Ուտիացոց և Աղուանից երկրներում քրիստոնէութիւն տարածեց և այս երկրումն էլ նահատակուեց անօրէն լեռնականների ձեռքով։ Պատմութիւնից յայտնի է, որ այս կողմերն այցելեց նաև մեր Հնաշխարհիկ Մեսրոպ Մաշտոցը, Աղուանից և Ու-

---

*) Թուրքերը անուանում են այս վանքին «Քեօհնայ օջաղ»—հին ուխտատեղի և Հայոց պէս երկիւղածութեամբ սիրում են նրան ու պաշտում։